«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Պողոսյան Մարինե

Ուսումնական հաստատություն՝ Նոր Կյուրինի միջնակարգ դպրոց

Երևան 2022թ.

Բովանդակություն

Բովանդակություն----------2

Ներածություն----------3-5

«Սասնա ծռեր»(համառոտ)----------6-10

Արդյո՞ք էպոսում արծարծվում է հայրենասիրություն------10

Մե՞ծ է էպոսի դերը ազգային արժեհամակարգի

ձևավորման հարցում----------11-12

Եզրակացություն----------12-13

Օգտագործված գրականության ցանկ----------14

Ներածություն

«Սասնա Դավիթը» մեր ազգային հոգևոր մեծագույն հարստությունն է, որի մեջ արտահայտվում են ժողովրդի նվիրական խոհերն ու երազանքները, մեր դարավոր պայքարը հանուն ազատության, մեր ազգային կենցաղը, մեր բնավորությունը, մեր ոճն ու ոգին: Այս վեպը գրվել է հազար տարի շարունակ: Ժողովուրդը բերնեբերան այն պատմել է և հորինել, հարմարեցրել նոր ժամանակներին, հարստացրել նոր դրվագներով ու գաղափարներով, ամեն ասացող, ըստ իր շնորհքի ու հասկացության, մի բան է ավելացրել իր սովորածին, և այսպիսով, «Սասնա Դավիթը» դարձել է ժողովրդական հանճարի մի անգերազանցելի մարմնացում»:

Նաիրի Զարյան

Հիշենք, զօղորմին տանք

Գագիկ թագավորին՝ հազա՛ր օղորմի

Ծովինարին հազա՛ր օղորմի,

Հիշենք, զօղորմին տանք

Սան ա՛ս արին,Բաղդասարին

Հազա՛ր օղորմի

Հիշենք, զօղորմին տանք

Դեղձուն Ծամին հազա՛ր օղորմի,

Հիշենք, զօղորմին տանք

Մեծ Մհերին՝ հազա՛ր օղորմի,

Հիշենք, զօղորմին տանք

Արմաղանին՝ հազա՛ր օղորմի,

Հիշենք, զօղորմին տանք

Զենով Հովանին՝ հազա՛ր օղորմի,

Հիշենք, զօղորմին տանք

Քեռի Թորոսին՝ հազա՛ր օղորմի,

Հիշենք, զօղորմին տանք

Թառլան Ղավթին՝ հազա՛ր օղորմի,

Հիշենք, զօղորմին տանք

Խանդութ խաթունին՝ հազա՛ր օղորմի,

Հիշենք, զօղորմին տանք

Արտատեր պառավին հազա՛ր օղորմի,

Հիշենք, զօղորմին տանք

Փոքր Մհերին հազա՛ր օղորմի.

Հիշենք, զօղորմին տանք

Գոհար խաթունին հազա՛ր օղորմի,

Հիշենք, զօղորմին տանք

Հազար օղորմի

Սասնա Ջոջ տան մեծին ու փոքրին:

Հայ ժողովրդի հանճարը դարերի ընթացքում երկնել է այնպիսի մի բացառիկ ստեղծագործություն, ինչպիսին <<Սասնա ծռեր>> դյուցազներգությունն է:

<<Սասնա ծռեր>>-ը ժողովրդական ստեղծագործություն է, այսինքն՝ բանահյուսական երկ: Այն ոչ թե հորինել է մեկ հոգի, այլ ամբողջ մի ժողովուրդ: Դարերի ընթացքում պատմվելով՝ այն հարստացել է, ստեղծվել են բազմաթիվ պատումներ և հասել մինչև մեր ժամանակները:

<<Սասնա ծռեր>> դյուցազներգությունը Միավորված ազգերի կազմակերպության, գիտության և մշակույթի հանձնաժողովի (ՅՈՒՆԵՍԿՕ) կողմից ճանաչվել է համամարդկային մշակութային արժեք :

Էպոսի մասին դեռևս 16-րդ դարում առաջին արձագանքները պահպանվել են պորտուգալացի ճանապարհորդների գրառումներում: Թռուցիկ արձագանքներ են 19-րդ դարում նախ բանահավաք Գարեգին Սրվանձտյանը, ապա հայագետ Մանուկ Աբեղյանը գրի առան դյուցազներգության առաջին պատումները:

Գարեգին Սրվանձտյանն այն լսեց Մուշի գավառում և 1874 թվականին հրատարակեց «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» վերնագրով: Մանուկ Աբեղյանի գրառումը «Դավիթ և Մհեր» վերնագրով լույս է տեսնում 1889 թվականին: Հետագա տասնամյակների ընթացքում՝ մինչև 1960-ական թթ. , տարբեր սերնդի բանահավաքներ գրի են առել նորանոր պատումներ, որոնց թիվը հասնում է 160-ի:

Դյուցազներգությանն ասում են նաև էպոս, հերոսավեպ, ասք, վիպասք, վիպերգ, վիպասանություն :

«Սասնա ծռեր»-ն ստեղծվել է 8-10-րդ դարերում, երբ հայ ժողովուրդը գտնվում էր արաբական լծի ներքո և ազատագրական պայքար էր մղում ՝ վերականգնելու իր անկախությունն ու պետական ինքնուրույնությունը:

Հետազոտության նպատակն է պարզաբանել հետևյալ հիմնախնդիրները՝

1. Արդյո՞ք էպոսում արծարծվում է հայրենասիրություն:
2. Մե՞ծ է էպոսի դերը ազգային արժեհամակարգի ձևավորման հարցում:

Մեթոդ՝ ԳՈՒՍ:

Սասնա ծռեր

(համառոտ)

«Սասունցի Դավիթ» համահավք բնագիրը բաղկացած է 4 ճյուղից ՝

1. «Սանասար և Բաղդասար»
2. «Մեծ Մհեր»
3. «Սասունցի Դավիթ»
4. «Փոքր Մհեր»

Սա մեկ տոհմի հերոսների պատմություն է, ովքեր հաջորդաբար շարունակում են հայրենաշինության իրենց գործը: Նրանք օժտված են գերբնական ուժով, կրակոտ բնավորությամբ, չարը կործանելու և բարին հաստատելու վճռականությամբ:

Հերոսների և դեպքերի շարքը հետևյալն է:

Հայոց Գագիկ թագավորի դուստր Ծովինարը ժողովրդին Բաղդադի խալիֆի ճնշումներից ազատելու նպատակով համաձայնում է դառնալ նրա կինը:

Ծովինար խանում ասաց.

-Որ ես էն կռապաշտ թագավոր չառնեմ,

Զամեն տի սպանի իմ պատճառով,

Աղեկն էն է,ե՛ս էրթամ,

Ուրիշ մարդու թող բան չըլնի:

Ե՛ս մենակ մեռնիմ իմ հոր թերեն.

Ես մեկ ջան եմ,էրթամ,կորսըվիմ,

Քանց մեր Հայաստան երկիր ավերի,

Էն հազար-հազար հոգիք կորուսանին:

Դարձավ ասաց.-Հա՛յրիկ,ինձ տուր էնոր:

Գնալուց առաջ նա ծովի միջից բխող աղբյուրից երկու ափ ջուր է խմում.մեկը՝ լրիվ,մյուսը՝ կիսատ:Այդ ջրից նա հղիանում է և ծննդաբերում Սանասարին ու Բաղդասարին:Ինչպես կույս Մարիամից ծնվեց Քրիստոսը,ով մարդ էր,դարձավ Աստված,այնպես էլ կույս Ծովինարից ծնվեցին նրա տղաները,որոնցից Սանասարը դարձավ դյուցազուն և եղավ դյուցազնական զարմի սկզբնավորողը:

Սանասարը և Բաղդասարը հմնադրում են Սասնա տունը՝ Սասունը,որ կոչվում է նաև Ջոջանց տուն:

«Հալվորի գալուն պես էլնենք դիմաց,

Ինչ խոսք էնոր բերեն էլնի.

Մեր բերդի անուն էն թող ըլնի»:

_Էդո՞ր անուն դնեմ:

Վա՛,էս ի՞նչ սասուն քարեր են,

Դուք էն սասուն քարեր

Ի՞նչպես հաներ եք էն վերին տեղ,

Ու քարե սան սուն եք զարկե.

Էս տուն չեք շինե դուք,

Ապա սասուն մ'եք շինե:

Վա՛,քանի սասուն բերդ մի.

Էս տուն չէ,էս սասուն է:

Սանասար ասաց.-Բավ է,պապիկ,

Էլ ձեն մի հանի,էլ անուն մի դնի.

Ա՛յ պապի,անուն դրվավ,

Անուն էղավ Սասուն:

Սանասարը ծովի տակից հանում է Քուռկիկ Ջալալիին,Թուր Կեծակին և Խաչ Պատերազմին:

Սանասարն ամուսնանում է Քառսուն-Ճուղ-Ծամ Դեղձուն Ծամի հետ,ունենում են երեք որդի՝ Մհեր,Հովհան,Վերգո:

Սասնա դյուցազունները գնում են Բաղդադ,սպանում խալիֆին,ազատում իրենց մորը և գալիս հայոց աշխարհ:

Սանասարի ժառանգական իրավունքը շարունակում է Մհերը:

Մեծ Մհերն աչքի է ընկնում ուժով և հայրենասիրությամբ:Նա երկու կես է անում առյուծին և դրա համար էլ կոչվում Առյուծաձև Մհեր:Նա դուրս է անում Մըսրա Մելիքի հարկահաններին և Հայաստանն անկախացնում:

Ես իմ ասպապը տի հանեմ,

Կուշտի՛ կպնեմ առյուծի հետ:

Մհերի հետ գնացած մարդիկ հեռու կանգնան.

Մհեր մենա՛կ գնաց:

Գնաց,ինք ու առյուծ առան իրար:

Մեր կանչեց.-Հացն ու գինին,տեր կենդանին:

Կանչեց,մի ձեռ թալեց էդ առյուծի վերի՛ ծնոտ,

Մյուս ձեռ թալեց ներքի՛ ծնոտ,

Ճղեց էդ առյուծ մեջտեղեն,

Արե՛ց էնոր էրկու կտոր:

Մեկ դրեց ճամփու էս դին,մեկէլ՝ էն դին:

Նրա օրոք է կառուցվում Մարութա վանքը,որ հայտնի է նաև Մարաթուկ անունով,ինչը Սուրբ Աստվածածին եկեղեցին է:Մհերը գնում է Մըսր և երկար տարիներ մնում այնտեղ՝Մըսրա Մելիքի մահից հետո դառնալով նրա կնոջ՝ Իսմիլ Խաթուն ամուսինը:Նրանից ծվում է Փոքր Մըսրա Մելիքը:Ի վերջո,Մհերը թողնում է օտարությունը,վերադառնում Սասուն և ուխտի համաձայն՝ իր ու կնոջ՝Արմաղանի մահվան գնով լույս աշխարհ է բերում Դավիթին:

Դավթը մնում է առանց ծնողների,մեծանում է նախ Մըսրում,ապա՝ Սասունում:Նա ավելի հզոր էր,քան հայրն ու պապը:Նա երկրից վռնդում է Մըսրա Մելիքի հարկահաններին,վերաշինում հոր կառուցած եկեղեցին,պատերազմի ժամանակ հաղթում Մըսրա Մելիքին և ամրապնդում երկրի անկախությունը:

Կըտրեց քառսուն ջաղացի քար,

Կըտրեց քառսուն գոմշու կաշին,

Կըտրեց հըրեշ Մըսրա Մելքին,

Կըտրեց ճակտից,ոտքերուց դուրս էլավ

Ու յոթ գազ էլ մտավ գետնին:

Մըսրա Մելիք խատա՛վ:

Մեթոդ՝ Վենի դիագրամ:

Դավիթն ամուսնանում է Խանդութ խանումի հետ,ծնվում է Փոքր Միհրը : Յոթ տարվա բաժանումից հետո,չճանաչելով որդուն՝ Փոքր Միհրին,Դավիթը կռվում է նրա հետ,որի հետևանքը լինում է հոր անեծքը որդուն:

«Անմա՛հ ըլնես, անժառա՛նգ»:

Դավիթն սպանվում է իրենից սերված աղջկա ձեռքով,ում մայրը Չմշկիկ Սուլթանն էր:Դավիթը խոսք էր տվել ամուսնանալ նրա հետ,բայց խոստումը չէր կատարել՝ «էրթմնակոտոր» էր եղել,դրա համար էլ դաժանորեն պատժվում է՝ հատուցելով կյանքով:

Փոքր Միհրն իր հերթին մեծ հայրենասեր է:Նա շարունակում է կռվել երկրի անկախության համար,սպանում Մըսրի հարկատուներին,լուծում է նաև հոր մահվան վրեժը:

Փոքր Միհրն ամուսնանում է Գոհարի հետ,բայց հոր անեծքով մնում է անժառանգ:Կնոջ մահից հետո նա փակվում է Վանա քարի մեջ,որին ասում են նաև Ագռավաքար:

Փոքր Միհրը թեև փակված է,բայց անմահ է և դեռ պիտի դուրս գա լույս աշխարհ:

Քանի աշխարք չար է,

Հողն էլ դալբցեր է,

Մեջ աշխարքին ես չեմ մնա:

Որ աշխարք ավերվի, մեկ էլ շինվի,

Երբոր ցորեն էղավ քանց մասուր մի,

Ու գարին էղավ քանց ընկուզ մի,

Էն ժամանակ հրամանք կա,

որ էլնենք էդտեղեն։

Մեթոդ՝ Քառաբաժան։

1. **Արդյո՞ք էպոսում արծարծվում է հայրենասիրություն:**

Ամողջ դյուցազներգությունը հագեցած է մեկ հիմնական գաղափարով,ինչը հայրենասիրությունն է:Դրա համար են ծնվում,ապրում,գործում և մեռնում բոլոր հերոսները:Այդպես էլ պետք է լիներ,որովհետև հայ ժողովուրդ դարեր շարունակ հերոսական ու անհավասար կռիվ է մղել իր հայրենիքն ու արժեքները պահպանելու համար:Հայրենասիրությունը Սասնա հերոսների գերակա նպատակն է:Նրանց գործունեության մնացած բոլոր բնագավառները բխում են դրանից և ուղղված են դրան:

2. **Մե՞ծ է էպոսի դերը ազգային արժեհամակարգի ձևավորման հարցում:**

Էպոսի դերը մեծ է նաև ազգային արժեհամակարգի ձևավորման գործում:

Հայրենասիրությանը զուգընթաց պետք է զարացնել աշակերտների ազգային մտածողությունը,պետականության նկատմամբ ունեցած նրանց վերաբերմունքը: «Սասնա ծռեր» էպոսի դյուցազունները՝ չորս գլխավոր հերոսները,ներկայացնում են սեփական գոյության պահպանման և ապրելու իրավունքի հաստատման համար մղվող հազարամյակների անհավասար պայքարը՝ պահելով մեր ազգային արժեքները,որոնք ժամանակի ընթացքում փոխում են իրենց ձևը,բայց բովանդակությունը նույնն է մնում:

Մեր էպոսը մեզ է հասել անաղարտ վիճակում, առանց անցնելու անհատական ստեղծագործության բովով, որով ավելի է բարձրանում նրա արժեքը որպես բուն ժողովրդական մտածելակերպի արտահայտություն:

Հարկ է այստեղ շեշտել,որ նկատելի է նաև այն հանգամանքը,որ կա միտում՝ մեր մեջ եղած ուժեղին թուլացնելու թե՛ էպոսում,թե՛ այսօրվա իրականության մեջ:Բայց բացահայտելով և իմանալով դրա մասին առավել,քան երբևէ,պետք է հստակ ձևավորել ազգային կուռ արժեհամակարգ:

Եվ էպոսի մեջ ամրագրված արժեքների ներկայացմամբ ցույց տալ,որ դրանք դեռևս պահպանում են իրենց կենսունակությունը:

Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի և օտար լեզուների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ:Մեր ազգային էպոսի արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ

ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Եզրակացություն

Սասնա ծռեր էպոսն ունի պատմական,ազգային նկարագիր,արմատներ և արժեհամակարգ:Ուստի ամեն հայ պարտավոր է ճանաչել ինքն իրեն,իր պատմությունը,իր տեսակը,որպեսզի ապրի և հարատևի:

Ուզում ես իմանալ,թե ով ես դու,ճանաչի՛ր,խորությա՛մբ կարդա էպոսը:



Օգտագործված գրականության ցանկ

«Սասունցի Դավիթ»,Հայկական ժողովրդական էպոս,Երևան «Արևիկ» հրատարակչություն,1989թ.

Գրականություն,9-10-րդ դասարաններ,Երևան «Տիգրան Մեծ» հրատարակչություն,1820թ.

Համացանց